Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[1] Դուրս գրման ամսաթիվ		
11	Ապրիլ	2019 թ.
[4] Մատակարարման ամսաթիվ		
11	Ապրիլ	2019 թ.

[2] Սերիա	[3] Համար
Ա	4041832035

Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ — N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	

[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	18106718 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

11/04/2019 12:36:19

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

16 դեկտեմբերի 2018թ. ք. Գյումրի

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Մ.Գ.Բիշարյանս, քննարկելով 18106718 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի նոյեմբերի 10-ին, ժամը 02:30-ին <<Գյումրի բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերությունից << ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժին ահազանգ է ստացվել, որ իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել Գյումրի քաղաքի Կոշտոյան 14 շենքի 31 բնակարանի բնակիչ, 1974թ. ծնված Ռուբիկ Անուշավանի Մինասյանը՝ <<կրծքավանդակի ձախ կեսի և գոտկաշրջանի աջ կեսի կտրած-ծակած թափանցող վերքեր>> ախտորոշմամբ:

Փաստի առթիվ 2018 թվականի նոյեմբերի 10-ին << քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 18106718 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Դեպքի վայրի զննությամբ Գյումրի քաղաքի 227/119 տնակի հյուրասենյակի աջ անկյունում դրված սեղանի վրայից վերցվել է մեկ հատ կարմիր և սպիտակ բռնակով խոհանոցային դանակ և մեկ հատ թռչունի պատկերով փորագրված բռնակով դանակ, իսկ տնակի մուտքի դռան դիմացի հատվածից հայտնաբերվել է արնանման նյութի հետքեր:

2018 թվականի նոյեմբերի 10-ին Ռուբիկ Անուշավանի Մինասյանը ճանաչվել է տուժող և ցուցմունք է տվել, որ 2008 թվականից շփվել է Շուշանիկ Բարսեղյանի հետ, ունեն մեկ երեխա: 2018 թվականի նոյեմբերի 09-ին ինքը հերթական անգամ գնացել է Շուշանիկ Բարսեղյանի՝ Գյումրի քաղաքի Մանուշյան 227/119 տնակ, միասին՝ ինքը, Շուշանիկը, վերջինիս որդին՝ Հենրիկը և իր դուստրը՝ մանկահասակ Մարիամը տնակի հյուրասենյակում ընթրել են, որի ժամանակ Շուշանը իրեն անհիմն մեղադրել է դավաճանության համար, ինքը նյարդայնացել է, սկսել բղավել Շուշանի վրա, հարվածել վերջինիս և այդ ժամանակ Հենրիկը միջամտել է ու դանակով երկու անգամ հարվածել իրեն՝ կրծքավանդակին և գոտկային հատվածին ու տանից փախել: Դրանից հետո ինքը հանել է իր հագին գտնվող արյունոտ հագուստները՝ սվիտերը և մայկան, գցել հյուրասենյակում գտնվող վառարանի մեջ և այրել, որից հետ նրան տեղափոխել են հիվանդանոց ու վիրահատել:

Վկայի դատավարական կարգավիճակում Շուշանիկ Վոլոդյայի Բարսեղյանը ցուցմունք է տվել, որ բնակվում է Գյումրի քաղաքի Մանուշյան 227/119 տնակում՝ անչափահաս երեք երեխաների հետ միասին: Ռուբիկ Անուշավանի Մինասյանը հանդիսանում է իր փոքր երեխայի հայրը, որ բնակվում է առանձին, սակայն հաճախակի գիշերում է իր տանը և նորմալ հարաբերությունների մեջ է գտնվում ընտանիքի անչափահաս անդամների հետ: 2018 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 21:00 ի սահմաններում Ռուբիկը եկել է իր տուն, միասին ընթրել են, որի ժամանակ իր և Ռուբիկի միջև սկսվել է զրույց դավաճանության մասին՝ մեկը մյուսին մեղադրել են դավաճանության համար և վերջինս սկսել է իր հասցեին տալ սեռական բնույթի հայհոյանքներ, քաշել շորերից, հարվածներ հասցնել մարմնի տարբեր մասերին: Հենրիկը ցանկացել է հանդարտեցնել, բաժանել, որի ժամանակ Ռուբիկը սկսել է հայհոյել և հարվածներ հասցնել նրան: Այդ ընթացքում այնտեղ է եղել նաև փոքր աղջիկը, ինքը գրկել է նրան, տարել ննջասենյակ և լսել Ռուբիկի բղավոցը՝ << էս դու ընձի խփեցիր>>: Վերադառնալով հյուրասենյակ ինքը փորձել է հանգստացնել՝ մտածելով որ

Հենրիկը ձեռքով է հարվածել Ռուբիկին և այդ ժամանակ տեսել է, որ Ռուբիկը ձեռքը դրել է կրծքավանդակին և այդ հատվածից արյուն է գալիս ու հասկացել է, որ Հենրիկը դանակով է հարվածել Ռուբիկին: Դրանից հետո Հենրիկը փախել է տանից և ինքը զանգահարել է 1-03:

2018 թվականի նոյեմբերի 10-ին ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժին է ներկայացել Գյումրի քաղաքի Մանուշյան փողոցի 227/119 տնակի բնակիչ, 05.03.2003թ. ծնված, Հենրիկ Արշակի Խաչատրյանը և հայտարարել, որ ինքն է դանակահարել Ռուբիկ Անուշավանի Մինասյանին:

Անչափահաս Հենրիկ Արշակի Խաչատրյանը կասկածյալի դատավարական կարգավիճակում ցուցմունք է տվել, որ կատարվածի մեջ իրեն լիովին մեղավոր է ճանաչում, զղջում է իր կողմից կատարած արարքի համար: Հենրիկ Խաչատրյանը հայտնել է, որ վերը նշված հասցեում բնակվում է մոր՝ Շուշանիկ Բարսեղյանի, եղբոր՝ Համլետ Բարսեղյանի, ծնված 2006թ. և քրոջ՝ Մարիամ Բարսեղյանի, ծնված 2017թ., հետ միասին: 2018 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 21:00-ի սահմաններում իրենց՝ Գյումրի քաղաքի Մանուշյան 227/119 տնակ է եկել Ռուբիկը, ով հանդիսանում է իմ քրոջ Մարիամի հայրը: Միասին ընթրել են, որի ժամանակ Ռուբիկի և մոր միջև սկսվել է դավաճանության թեմայով խոսակցություն, որի ժամանակ Ռուբիկը ձեռքերով հարվածներ է հասցրել մորը, սեռական բնույթի հայհոյանքներ տվել: Ինքը փորձել է հանգստացնել, բաժանել նրանց, սակայն Ռուբիկը սկսել է իրեն սեռական բնույթի հայհոյանքներ տալ և ձեռքերով մարմնի տարբեր մասերին հարվածել: Այդ ընթացքում ինքը տնակի նախասրահի պահարանի վրայից վերցրել սպիտակ բռնակով, վերևի մասը սղոցանման, ժանգոտված դանակը ու Ռուբիկ Մինասյանին՝ երկու անգամ՝ առաջինը կրծքավանդակին, երկրորդը գոտկատեղի հատվածին դանակով հարվածել, որից հետո այդ դանակը գցել է նախասրահի պահարանի տակ և տանից փախել: Հենրիկ Խաչատրյանը իր ցուցմունքով նշել է, որ կարող է ներկայացնել հանցագործության գործիք դանակը:

Նույն օրը Հենրիկ Խաչատրյանի կողմից նշված՝ Գյումրի քաղաքի Մանուշյան 227/119 տնակի նախասրահի պահարանի տակից առգրավել է սպիտակ բռնակով, վերևի մասը սղոցանման, ժանգոտված դանակը:

2018 թվականի նոյեմբերի 17-ին վերը նկարագրված հանցավոր արարքը մեղավորությամբ կատարելու համար Հենրիկ Արշակի Խաչատրյանը սույն քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245-րդ, 248-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Քրեական գործով նշանակել դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի փորձագետերին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Փորձագետի պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը

2018 թվականի նոյեմբերի 10-ին նկարագրված հանցավոր արարքը կատարելու պահին մեղադրյալ Հենրիկ Արշակի Խաչատրյանը գտնվել է արդյոք հոգեկան խիստ հուզմունքի /ֆիզիոլոգիական աֆեկտի/ վիճակում, թե ոչ:

- հանցավոր արարքը կատարելու պահին Հենրիկ Արշակի Խաչատրյանը գտնվել է արդյոք այնպիսի հուզական վիճակում հոգեկան լարվածություն, ֆրուստրացիա, շփոթվածություն, սթրես և այլն, որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա:

3. Փորձագետի միջնորդությամբ փորձաքննությանը ներկայացնել Հենրիկ Արշակի Խաչատրյանին և 18106718 քրեական գործի նյութերը:

Քննիչ Մ.Գ.Բիշարյան